Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Մասնագիտությունը՝ 0821.02.4 «Պարտեզապուրակային գործ» Որակավորումը՝ 0821.02.01.4 «Այգեպան»
I. Դերը	Այգեգեպանը կատարում է ծաղկային և դեկորատիվ բույսերի աճեցման, տարածքների կանաչապատման և բարեկարգման հետ կապված աշխատանքներ:
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Ծաղկադեկորատիվ բույսերի աճեցման և մշակման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	- ծաղկադեկորատիվ բույսերի սերմնային և վեգետատիվ բազմացման օժանդակ աշխատանքների կատարում, - ծաղկադեկորատիվ բույսերի ծիլերի սածիլում, ծաղկադեկորատիվ բույսերի փոխատնկում հողի մեջ, - թաղարի ծաղկադեկորատիվ բույսերի վերատնկում, - ծաղկադեկորատիվ բույսերի խնամքի աշխատանքների կատարում, - ծաղկադեկորատիվ բույսերի ձևավորման աշխատանքների կատարում:
Կատարման չափանիշներ	- ծաղկադեկորատիվ բույսերի սերմնային և վեգետատիվ բազմացման օժանդակ աշխատանքները կատարված են, - ծաղկադեկորատիվ բույսերի ծիլերի սածիլումը կատարված է, - ծաղկադեկորատիվ բույսերի փոխատնկումը հողի մեջ կատարված է, - թաղարի ծաղկադեկորատիվ բույսերի վերատնկումը կատարված է, - ծաղկադեկորատիվ բույսերի խնամքի աշխատանքները կատարված են, - ծաղկադեկորատիվ բույսերի ձևավորման աշխատանքները կատարված են:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Դեկորատիվ ծառերի և թփերի աճեցման և մշակման աշխատանքների կատարում	

Աշխատանքային գործընթացը	- դեկորատիվ ծառերի և թփերի բազմացման օժանդակ աշխատանքների կատարում, - դեկորատիվ ծառերի և թփերի տնկման աշխատանքների կատարում, - դեկորատիվ ծառերի և թփերի խնամքի աշխատանքների կատարում, -դեկորատիվ ծառերի և թփերի պսակի ձևավորման աշխատանքների կատարում:
Կատարման չափանիշներ	-դեկորատիվ ծառերի և թփերի բազմացման օժանդակ աշխատանքները կատարված են, -դեկորատիվ ծառերի և թփերի տնկման աշխատանքները կատարված են, -դեկորատիվ ծառերի և թփերի խնամքի աշխատանքները կատարված են, -դեկորատիվ ծառերի և թփերի պսակի ձևավորման աշխատանքները կատարված են:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Տարբեր տարածքների կանաչապատում և բարեկարգում	
Աշխատանքային գործընթացը	- տարբեր տեսակների ծաղկանոցների և սիզամարգերի կառուցման և խնամքի աշխատանքների կատարում, - ուղղաձիգ կանաչապատման, դալար ցանկապատերի կառուցման և մշակման աշխատանքների կատարում, - խճահատիկային, կոճղային, հատուկ խառնուրդներից այգեուղիների կառուցման և նորոգման աշխատանքների կատարում, - ջրային կառուցվածքների շինարարության և պահպանման աշխատանքների կատարում;
Կատարման չափանիշներ	- տարբեր տեսակների ծաղկանոցների և սիզամարգերի կառուցման և խնամքի աշխատանքները կատարված են, - ուղղաձիգ կանաչապատման, դալար ցանկապատերի կառուցման և մշակման աշխատանքները կատարված են, - խճահատիկային, կոճղային, հատուկ խառնուրդներից այգեուղիների կառուցման և նորոգման աշխատանքները

	կատարված են, - ջրային կառուցվածքների շինարարության և պահպանման աշխատանքները կատարված են:
III.Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Այգեպանը պատասխանատու է իրեն վերապահված աշխատանքի որակի, սեփական պարտականությունների պատշաճ կատարման, իրեն վստահված արտադրական միջոցների պահպանման և արդյունավետ շահագործման, արտադրական սանիտարիայի, անվտանգության տեխնիկայի կանոնների և հակահրդեհային անվտանգության կանոններից բխող պահանջների կատարման համար:
IV. Լեզուները	հայերեն՝ ազատ ռուսերեն՝ լավ օտար լեզվի մասնակի իմացություն՝ շփվելու, մասնագիտական գրականությունից և սարքավորումներից օգտվելու համար:
V. Համակարգիչը	MS office՝ լավ Internet՝ լավ
VI. Գիտելիքները	- հաղորդակցություն, անվտանգության կանոններն ու առաջին բուժօգնություն, - բուսաբանություն, ագրոէկոլոգիա, - դեկորատիվ բուսաբուծության հիմունքները, - այգեգործական մասնագիտացված գործիքներ, սարքավորումներ և մոբիլ էներգետիկական միջոցներ -ծաղկադեկորատիվ բույսերի աճեցում բաց գրունտում, դեկորատիվ ծառերի և թփերի աճեցում և մշակում - ցանքի և ծառատունկի կանոնները, - սիզամարգերի կառուցվածքը և պահպանման կանոնները, - սերմերի նախացանքային մշակման եղանակները, - հողի նախացանքային և նախատնկման մշակման աշխատանքները, բուսահողի պատրաստման, պահեստավորման և տեղափոխման ձևերը,

	- բույսերի սնուցման տեսակները և կատարման կանոնները, - բույսերը հողի մեջ փոխատնկման ժամկետները, պայմանները և ձևերը, - բույսերի վերատնկման ժամկետները և եղանակները, - մոլախոտերի տեսակները և դրանց դեմ պայքարի միջացառումները, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի ոռոգման եղանակները և առանձնահատկությունները, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի եղանակները, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի խնամքի աշխատանքները և դրանց առանձնահատկությունները, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի ձևավորման եղանակները, - ծաղկանոցների կառուցման եղանակները, - ճմահողի պատրաստման եղանակները, - այգեուղիների կառուցվածքը, պահպանման կանոնները և նորոգման եղանակները - սիզամարգերի կառուցվածքը և պահպանման կանոնները, - քաղաքի պայմաններում մեքենայացված միջոցներով ծառահատման, ճյուղերի կտրման, կոճղահատման աշխատանքների կանոնները:
VII. Կարողությունները և հմտությունները	- թիմային աշխատանք, - սպասարկման հմտություն, - հաղորդակցվելու հմտություն, - միջանձնային հարաբերություններ, - մասնագիտացված գործիքների, սաքավորումների և մոբիլ էներգետիկական միջոցների կիրառման կարողություն, - սերմերի նախացանքային մշակման կարողություն, - հողը ցանքի և ծառատունկի նախապատրաստման

	կարողություն, - սերմերի ցանքի կատարման կարողություն, - սածիլների տնկման և խնամքի աշխատանքների կատարման կարողություն - ծառատունկի կատարման կարողություն, - բույսերի վերատնկման, կատարման կարողություն, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի խնամքի աշխատանքների՝ ըստ ագրոտեխնիկական պահանջների, կատարման կարողություն, - կատարել ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի ոռոգման աշխատանքների կատարման կարողություն, - կատարել ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի վնասատունեի և հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների կատարման կարողություն, - ծաղկադեկորատիվ բույսերի, դեկորատիվ ծառերի և թփերի ձևավորման աշխատանքների կատարման կարողություն , - տարբեր տեսակների ծաղկանոցների կառուցման աշխատանքների կատարման կարողություն, - ճմահողի պատրաստման, պահեստավորման, տեղափոխման և տեղադրման կարողություն, - այգեուղիների կառուցման, պահպանման և նորոգման աշխատանքների կատարման կարողություն, - սիզամարգերի կառուցման և պահպանման աշխատանքների կատարման կարողություն, - քաղաքի պայմաններում մեքենայացված միջոցներով ծառահատման, ճյուղերի կտրման, կոճղահատման աշխատանքերի կատարման կարողություն՝ պահպանելով անվտանգության կանոնները:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Պատասխանատու, պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության զգացում: